**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության հանրային**
**ծառայությունները կարգավորող հանձնաժողովի**
**2026 թվականի _____ «___»-ի N ___-Ն որոշման**

**Հավելված N 8**
**Էներգետիկայի բնագավառում**
**գործունեության լիցենզավորման**
**կարգի**

# ԿԱՐԳ

# ԷՆԵՐԳԻԱՅԻ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

## ԳԼՈՒԽ 1

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 51.5-րդ կետով նախատեսված դեպքում էներգիայի պահեստավորման լիցենզիաների տրամադրման և սակագների սահմանման նպատակով Հանձնաժողովի կողմից մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը:

2. Մրցույթը կազմակերպվում և անցկացվում է մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով՝ ապահովելով բոլոր հայտատուների մասնակցության հավասար հնարավորությունը:

## ԳԼՈՒԽ 2

## ՄՐՑՈՒՅԹԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄԸ

3. Էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի առաջարկը ստանալուց հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում, Հանձնաժողովն ընդունում է Մրցույթ անցկացնելու մասին որոշում, որով հաստատվում է՝

1) Մրցույթի սահմանաչափը.

2) Մրցույթի առավելագույն գինը կամ դրա հաշվարկման և վերանայման կարգը.

3) էներգիայի պահեստավորման լիցենզիայում ամրագրվող կառուցման և պահեստավորման ժամանակահատվածները.

4) Մրցույթի հրավերը (այսուհետ՝ Հրավեր) և գնահատող հանձնաժողովը:

4. Մրցույթի սահմանաչափ է համարվում Մրցույթի շրջանակում բաշխման ենթակա գումարային դրվածքային հզորությունը կամ էներգիայի ծավալը:

5. Մրցույթն անցկացվում է մեկ փուլով՝ բաց ընթացակարգով:

6. Մրցույթ անցկացնելու մասին որոշումը և Հրավերը հրապարակվում են Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետից ոչ ուշ, քան 30 օրացուցային օր առաջ:

7. Հրավերը ներառում է առնվազն՝

1) հայտերի ներկայացման վերաբերյալ ընդհանուր դրույթներ, ներառյալ պարզաբանումներ ստանալու կարգը, շահերի բախման կանոնները, հայտով ներկայացվող գնի արժույթը, հայտերի ներկայացման վերջնաժամկետը, դրանց բացման օրը և ժամը,

2) հայտի կազմման, ձևակերպման և ներկայացման պահանջները, հայտատուների որակավորման պահանջները, ինչպես նաև դրանց համապատասխանությունը հավաստող՝ հայտին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը,

3) պահեստավորող կայանի հարաչափերին ներկայացվող պահանջները.

4) հայտերի գնահատման չափանիշները,

5) հաղթող ճանաչված անձի իրավունքներն ու պարտավորությունները, այդ թվում՝ լիցենզիա ստանալու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը և ներկայացման ժամկետը, տրամադրվելիք լիցենզիայի պայմանները,

6) էներգիայի պահեստավորման երաշխիք ունեցող կայանի կողմից էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման պայմանագրի օրինակելի ձևը:

8. Մրցույթի վերաբերյալ պարզաբանում ստանալու հարցումները ներկայացվում են Հրավերով սահմանված ժամկետում և կարգով: Հարցումները և դրանց պատասխանները, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքի, հրապարակվում են սույն կարգի 6-րդ կետով սահմանված կարգով՝ առանց հարցումը ներկայացրած անձին նույնականացնող տվյալների:

## ԳԼՈՒԽ 3

## ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ԲԱՑՈՒՄԸ

9. Հայտը ներառում է առանձին տեխնիկական և ֆինանսական առաջարկներ, որոնք ներկայացվում են փակ ծրարներով: Հայտատուն նույն Մրցույթին չի կարող ներկայացնել մեկից ավելի հայտ:

10. Հայտերը բացվում են Հրավերով նախատեսված օրը և ժամին: Բացման նիստի վերաբերյալ գնահատող հանձնաժողովը կազմում է արձանագրություն, որը, բացառությամբ գաղտնի տեղեկությունների, հրապարակվում է Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում նիստի ավարտից հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում:

11. Հայտում վրիպակ, գրասխալ և թվաբանական սխալ հայտնաբերելու դեպքում գնահատող հանձնաժողովը գրությամբ հայտատուին տրամադրում է մինչև հինգ աշխատանքային օր՝ այն շտկելու համար: Շտկումը չի կարող հանգեցնել հայտում այլ տվյալների փոփոխման:

## ԳԼՈՒԽ 4

## ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

12. Գնահատող հանձնաժողովը հայտերը գնահատում է հետևյալ հաջորդականությամբ՝

1) որակավորման չափանիշների գնահատում.

2) որակավորման չափանիշները բավարարած հայտերի տեխնիկական առաջարկի գնահատում.

3) տեխնիկական առաջարկին ներկայացվող պահանջները բավարարած հայտերի ֆինանսական գնահատում:

13. Հայտը մերժվում է, եթե՝

1) ներկայացվել է վերջնաժամկետից հետո.

2) հայտատուն չի բավարարում որակավորման պահանջները.

3) տեխնիկական առաջարկը չի բավարարում վերջինիս ներկայացվող պահանջները.

4) առաջարկվող գինը գերազանցում է առավելագույն գինը.

5) հայտատուն գրությամբ սահմանված հինգ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկել դրանով մատնանշված անհամապատասխանությունները:

14. Չմերժված հայտերը դասակարգվում են ըստ առաջարկվող գնի աճման՝ մինչև Մրցույթի սահմանաչափի լրանալը: Մինչև սահմանաչափի լրանալը դասակարգված հայտեր ներկայացրած մասնակիցները համարվում են Մրցույթի հաղթող:

15. Այն դեպքում, երբ դասակարգմամբ վերջին մասնակցի (այսուհետ՝ սահմանային մասնակից) հայտը հաշվի առնելու դեպքում գերազանցվում է Մրցույթի սահմանաչափը, սահմանային մասնակցի կողմից առաջարկվող մեծությունը նվազեցվում է սահմանաչափը գերազանցող մասով՝ առանց առաջարկված գնի փոփոխման: Սահմանային մասնակիցն իրավունք ունի հրաժարվելու Մրցույթի հաղթողի կարգավիճակից, որի դեպքում Մրցույթը փակվում է առանց Մրցույթի սահմանաչափի լրիվ բավարարման: Միևնույն գին առաջարկած մի քանի սահմանային մասնակիցների դեպքում հաղթող է ճանաչվում տեխնիկական առաջարկով ավելի բարձր արդյունավետություն, իսկ դրա հավասարության դեպքում՝ հայտն ավելի վաղ ներկայացրած մասնակիցը:

## ԳԼՈՒԽ 5

## ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

16. Գնահատող հանձնաժողովը գնահատման արդյունքներով կազմում է արձանագրություն, որը ներառում է հայտերի գնահատականները, մերժման հիմքերը, հաղթողների հերթականությունը՝ համաձայն սույն կարգի 14-րդ կետի, յուրաքանչյուր հաղթողին հատկացվող հզորությունը և առաջարկված գինը: Հանձնաժողովն արձանագրության հիման վրա ընդունում է Մրցույթի հաղթողին կամ հաղթողներին ճանաչելու մասին որոշում:

17. Մրցույթը հայտարարվում է չկայացած, եթե՝

1) հայտ չի ներկայացվել.

2)ներկայացված հայտերից ոչ մեկը չի բավարարում Հրավերի պահանջները.

3) ի հայտ են եկել համակարգի անվտանգության կամ օրենսդրության փոփոխությամբ պայմանավորված հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում Մրցույթի շարունակումը, կամ էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության լիազորած մարմինը Հանձնաժողովին գրությամբ տեղեկացրել է Մրցույթի հիմքում դրված ռազմավարական ծրագրերի այնպիսի փոփոխության մասին, որն էականորեն ազդում է մրցույթի առարկայի կամ հիմնական պայմանների վրա կամ անհնար է դարձնում մրցույթի շարունակումը:

## ԳԼՈՒԽ 6

## ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

18. Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձը՝ հաղթող ճանաչելու մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում Հանձնաժողովին է ներկայացնում էներգիայի պահեստավորման լիցենզիա ստանալու հայտ՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի համաձայն:

19. Էներգիայի պահեստավորման լիցենզիա ստանալուց հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում, հաղթող ճանաչված անձը շուկայի կանոնների համաձայն կնքում է էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման պայմանագիր՝ Հրավերով հաստատված օրինակելի ձևին համապատասխան: Պայմանագրով նախատեսվող գինը, պահեստավորման ժամանակահատվածը և կայանի հարաչափերը չեն կարող տարբերվել Մրցույթի արդյունքներից:

20. Եթե հաղթող ճանաչված անձը սույն կարգով սահմանված ժամկետում չի ներկայացնում պահանջվող փաստաթղթերը, հրաժարվում է լիցենզիա ստանալուց կամ նրա լիցենզիա ստանալու հայտը մերժվում է, Հանձնաժողովը նրա վերաբերյալ Մրցույթի արդյունքն ուժը կորցրած է ճանաչում: Այդ դեպքում հաղթող է ճանաչվում առկայության դեպքում՝ սույն կարգի 14-րդ կետի համաձայն, մնացած դեպքերում սույն կարգի 14-րդ և 15-րդ կետերի համաձայն դասակարգմամբ նախորդող հայտատուն, եթե վերջինիս առաջարկը շարունակում է համապատասխանել Մրցույթի պայմաններին: Սույն կետի համաձայն նոր հաղթող ճանաչված անձի կողմից լիցենզիա ստանալու հայտ ներկայացնելու և էներգիայի պահեստավորման ծառայության մատուցման պայմանագիր կնքելու համար կիրառվում են սույն կարգի 18-րդ և 19-րդ կետերով սահմանված ժամկետները:

## ԳԼՈՒԽ 7
## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

21. Մրցույթի ավարտից հետո Հանձնաժողովն իր պաշտոնական կայքում հրապարակում է առնվազն՝

1) հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) անունը (անվանումը).

2) հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) առաջարկած գինը (գները).

3) հաղթող ճանաչվելու ամսաթիվը.

4) հատկացված հզորությունները.

5) գնահատման արդյունքները.

6) կառուցման ենթակա պահեստավորող կայանի հիմնական հարաչափերը.